

շինած է հարիւր հազար դուռը շէն աւելի ծախս ընկոյլ, եւ անոր պայծառութեանն ու յարատես բարեկարգութեանը համար անդազար նպաստելով: Ասկէց զատ փախանելու ատենը տասն հազար դուռուշ ալ նոյն քաղաքին մէջ հաստատուած Սեմեքերիմեան ուսումնասիրական ընկերութեանը շընորհեր է կտակաւ, նմանապէս բոլոր վանօրիէց եւ աղքատաց ալ առատածենն շնորհներ ըբեր է: Խոր ամենէն սիրելի փափաքը նկենիցեաց եւ դպրատանց պայծառութիւնը եւ ուսմանց ծաղիկից եղած էր: այս նպատակաւ խոր երեք եղբօրորդիներէն մէկը զՊ. Սերոք Շտապաշեան Փարիզի Հայկագեան վարժարանը խրկած էր, ուր մինչև հիմա կեննայ ուսմունք սովորելու եւ իր հանգուցեալ հօրենդօրը բաղձանքին համեմատ կատարեալ կրօսուրիս ստանալու, որպէս զի օգոսակար անդամ մը ըլլայ Ազգին եւ խոր բարեհամրաւ գերդաստանին: Հանգուցեալ Մահտեսի Տէր Գերոգ իր խոնճ եւ հանձարեղ վարուքք Սերաստիոյ բոլոր այլակրօն ընակլաց ալ մեծ կոկիծ տուեր է: Վասմափայլ կոսաւկար յատկապէս հրաման ըբեր է մեծահանդէս յուղարկաւորուրիս մը ընելու հանգուցելոյն, եւ մարմինը խոր պաշտին առջևեւն անցունելու որ վերջին անգամ տեսնէ զանիկայ: » (ՄԱՍԻՒԾ)

ՏԱԼՈՒԹԵՑՈՅ ԿԱՐԾՎԵՏ Է ՖԵԼԻՇԻ :— Գանուքի նաւարկութիւնը կանոնապես յանձնաբարական ժողովին է. Գրան կողմանէ անդամ Տառտեան մեծարգոյ Կարապետ Լիլնտին՝ Աւատրիոյ, Պափերի, եւ Վիրբեմպերկի քափառքց կողմանէ հնատեալ պատուանշաններն ընդունեցաւ. Աւատրիոյ՝ Ֆրանչիսկոս Յովսեփայ կարգին հրամանատարութեան պատուանշանը. Պափերի քափին երբորդ պատուանշանը: Վիրբեմպերկի քափին երրորդ պատուանշանը: (Մէծութիւն Անգլիա-ԱՄ.)

ՏԱՒԹԻՒՆ ԱԱԿՈԲ ԷՅԵԼՆԵՑԻ, որ արքունի բժշկական  
գպրոցին դաստուններն մեկն է՝ չորրորդ կարգի ՄԱՀԻԹիկ  
պատուանշանն ընդունեցաւ : (ԱՕՑ)

ՄՈՒՏՈՎԱՐԱՔԻՈՅ ՀԱՅԿԱԶՈՒՆՔ . — Հետեւեալ  
համակին մէջ ազնիւ գրողին ազգասիրական  
ողին փայլելուն և տուած ազգային տեղիելու-  
թեանցը համար արժան կհամարիմք մեր ըն-  
թերզողազր հաղորդել :

Գերապաժիւ Ասուածարեալ Տեառն Տեառն Ամբուկայ Վար-  
դանիկի Գայթաշին Ազգաւեր Սուրբ Հօր ,

Մատուր Սուլը Ազնի համբոյց խռարժութեան :

Միջըն. յամենայն ձշմարտասիրացն Խմբից արժանազով դրուստանաց եւ շնորհակալութեան բանք իրու. ի տառապանս տառադանս յամենայն կողմանց մատուցանեին առ ձշմարտաս-սկը Սուրբ Հարու ընդ մեծի եւ անընկենի առաքինութեան եւ ազգասիրական ձերց հանդիփից, և անա յախնմենու եւ այս համակրութիւն իմն զարմանապանչ ճնշեցուցաներ եւ զիմ սիրո կարողին բնդի ընդ մեզ հոգեխառնի, եւ զրտի իմոյ եւ զիմոց հայրենակցաց խոնարհական մեծարանս մասիրա եւ մարտերան շնորհապարտութեամբ եւ բարեմաղքութեամբ առ ոսս բարերար նահատակացդ Ազգիս սփուլէ տարածել: Բայց սակայն եւ զիմումին բանձանօրից գուով իմ անցեաւ ի կարգ. զի մի ինչ զվայելուուրեամբ երեւեցայց անցեալ զանցեալ, յակամայից իմն նարկեցայ ընդ վարպատուրա. ունել զգսրտի իմոյ մինչեւ ցապօր զեռանդին բոցատիպ բառ զոյն նեկամայ: Եւ անս աստանօր տեսցէ ինձ աշխարհ զանկեղծաւոր սիրոյ մազենասկան գորութեանն նորասքանչ հանդէս. զի բեկու եւ անձանօր յանձնէ եւ անարժան զիմումին շնաշխարհիկ ձեր սիրոյ, այսու ամենայնին խափան եւ ոչ մի ինչ

Կարաց արգելով զգեմ ունել գյարդասիրութեան ձերոյ առի ընդառաջել կանխել, և խրախուս արձարձել սիրառը կրից զգածմանց ընդ ձեռն համբուրելի և անզին իշշատակի Տէրունեան մատենին զոր ընկալայ ձեռամբ յարփ Պարոն Քարքիել Մսերեան: — Հայր իմ, Ազգասէր Սուրբ Հայր, անակնանելիդ այդ հանդիպուանն Հայրենականն ձեր սիրոյ՝ յապշուրին կրեաց զմիս զվատվին. և զիսրդ ինձ ննաբառը ի քան եւ ի մերան զարժանաւորն երախտագէտ մտօք բայտնել ձեզ շնորհապարտութիւն: Մատեանն սքանչելի, եւյն ինքն եւ եր իւրովն աստուածախօսիկ ոմի. յարմարեցլ. ձեզ շնորհակարութիւն վայելուց ընդ մեծի սիրոյ շնորհիդ: Կացցէ այն ուրեմն առ իս յորբոց յորդիս երկրպագեին սիրոյդ պանծացի իշշատակ, եւ եւս բուռն հարից խոնարհական մտօք բերից յազդարաբութիւն լույ իրիք ցնածափը քերեաւ ամենայն Հայտեաից, որպէս և ձերոցդ իսկ ազգասէր սրտից :

Ազպէն ձանաչէ Գերազանուութիւն ձեր զԱռաքելաշնորհ Սարգիս Սրբազնն Արքեպիկոլոպոսն Անդրեանուածուոյ, զայն գոր իշշատակեալ եկը նաև. ի մէջ պատուական Մատեան Ազանուոյ անցելոյ ամին. և. զիտեմք հաւաստեա. քէ ձանաչէք զնա, բառ որում և. նորին Սրբազնութիւնն բազում մեծաւ զովուրեամբ իշշէր զցանկաջի տեսութիւն ձեր վայելեալ ի Պատրիարքարանն Պուտոյ: — Եւ անա քաղցք է ինձ ծանուցանել զանպայման ցնծութիւն եւ զգոնուակութիւն Հասարակութեան Հայոց հանանգաց զՄաննէ, և զերախտագիտութիւն նոցա ի դէմ Հայրախնամ հսկողութեան Ամենապատիւ Վեհափառ. Սրբազն Պատրիարքին, և. Ազգախեամ Գերազոյն և. Հոգեւոր ժողովոցն, զի յայս նուազ շնորհ արարին տարակացելոյ բանաւոր Հօտիս տուժամանակեայ այցելութեամբ զայնպիսի հշնարիս և. քաջ Հովի մի պարզեւել: Օր նովեզօն և. իմաստուն Հովուութեամբն, այլ և. վեհանձնական և. միանզամայն եւս քաղցրաբարոյ զնացիւքն սիրովիէ համօրեն Հայոց Մոլովաւարիո, և պատկանեին եւս օստր ազան:

Սարգս Սբրազանն ժամանեաւ ևնաս ի քաղաքս մեր ի 15  
անցելոյն յունուարի, ընդ նոգեծին որդուոյ խըռամ շնորհափայլ  
Տէր Մետրոս Վարդապետի, ժամանցանելոյ ձեզ Տիբացու-  
Կարապետ Սարկաւազ անուամբ, եւ զրագիր ի Պատրիարքա-  
րանին Պօլոսյ. զորոց առեալ զլուք ուրախասովք գալուուանն,  
երկուք ումանք յերեւակեաց Սզգիս առուոք բառաջ դիմաւարեցին  
զնոսա չորս ժամու ձանապարհաւ նեսի ի քաղաքիւ: Խել  
ապա յերկորդում աւաւոր լրտեսեաւ զգալուստ նոցա՛ արտաքոյ-  
քաղաքին ընդ առաջ եկին ամենայն ժողովուրդն առ նասարակ-  
րազմութեամբ կառաց եւ նեծելոց, եւ նետիուոս զեացիւք: Ընդ  
որ եւ Աստիճանութիւն քաղաքիս նեծելազօրօք ումամբք  
պար արկեալ եւ սպասարքեալ շուրջ զիատօք նորին Սբրազ-  
նութեանն հանդարս եւ նեզիկ ընթացիւք ածին զնա մինչեւ  
ի դուռն Մայր Եկեղեցւոյ բակին:

Սատանօր լիզանել Սրբազնին ի կառացն, դիմաւորեալ զնա զատուն եկեղեցականաց համակ զգաստաւորեալց՝ ընդ դրդիսն բազմութեանն և ննջման ձայնի զանգակաց խառնեցան եւ քաղցրանուազ երգք մասնկանց Դարրցին. եւ այսպէս հանդիսի. եւ ուրախութեամբ բազմաւ մուծին զնա ի մէջ Տաճարին. ուրանօր համառօտ, քայլ սրտառուց ատենաբանութեամբ եւ օրննութեամբ աւարտեալ զիտնդեան՝ եմուս Սրբազնն լիւր պատրաստեալ օրեւանն ի բայ եկեղեցւոյն, ընդունել այցելութիւնս և յարգանաց շնորհաւորութիւնս լիւրաբանչիւր զատուց հանդիսականացն:

Յետ կատարելոյ այս պատճեն, ապա և Քաղաքավետ Խշան քաղաքին և. Անձագանին. Հիւպաստոք Գաղղիոյ և. Առատրիոյ, որպես և. այլ բարձրաստիճան անձնիք եկեալ ի շնորհաւորութիւն բարեմաման զայտեանն՝ նորին Սրբաց- նութիւնն համեցաւ առ. մեն մի ի նոցանէ. երբայ ի փոխազարձ աւցելութիւն, և արժանավայել պատուած ընկալաւ. լիւրա-